ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հունվարի 30-ին ժամը 14^{00}-ին կայացած
ՀՀ Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ընդհանուր ժողովի

Օրակարգ

Հայկաշեն համայնքի ղեկավարի 2018թ. տարեկան հաշվետվության ներկայացում:

/զեկուցող Վ. Հովհաննիսյան/
Մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները, ավագանիները, դպրոցի տնօրենը, բուժ. կետի աշխատակիցները, համայնքի բնակիչները:

Լսեցին.- համայնքի ղեկավարի 2018թվականի տարեկան հաշվետվությունը:

Համայնքի բնակիչները դժգոհեցին խմելու և ոռոգման ջրի անբավարարությունից: Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքում փակ դրենաժային համակարգը չի գործում որի պատճառով գրունտային ջրերը բարձրացել են,իսկ հողերը աղակալվում են, գյուղը գազաֆիկացված չէ, համայնքում կառուցվող մանկապարտեզը շուտով շահագործման կհանձնվի:

Համայնքի ղեկավարը նշեց նաև հիմնահարցերը,որոնք լուծելու համար մեծ գումարներ են անհրաժեշտ:

Մտքերի փոխանակումից հետո ժողովն ավարտվեց:

Համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

Արձանագրող՝ Գ. Եղշատյան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Հայկաշեն համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ և հյուրեր: Գործող կարգի և Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Ձեր քննարկմանն եմ ներկայացնում ըստ բնագավառների համայնքապետարանի, համայնքի ղեկավարի և ավագանու 2018 թվականի գործունեությունը:

2018 թ-ի ընթացքում համայնքի ղեկավարը հրավիրել և վարել է ավագանու 10 նիստ: Նիստերի ընթացքում լսվել են տարբեր հարցեր և ընդունվել է ավագանու համապատասխան որոշումներ: Ավագանու որոշումները յոթ օրյա ժամկետում ուղարկվել է մարզպետարան:

Սահմանվել է 2018թ-ին գումարվելիք ավագանու նիստերի ժամանակացույցը: Ընդունվել են համայնքի ղեկավարի 31 որոշումներ և արձակվել են 10 կարգադրություններ:

Այժմ մեր գործունեությունը ներկայացնեմ ըստ բնագավառների՝.

1. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Համայնքի ղեկավարը իր իրավասությունների շրջանակներում պաշտպանել է համայնքի բնակիչների շահերը , կազմակերպել է համայնքի բնակչության հաշվառում . այն է՝

Մշտական բնակչություն 1428 մարդ. որից՝

1. Թոշակառու –107
2. Նպաստառու ընտանիքներ – 17
3. Զոհված ազատամարտիկ – 1 ընտանիք
4. Հաշմանդամ – 12
5. Միակողմանի ծնողազուրկ – 3 ընտանիք
6. Երկողմանի ծնողազուրկ – 1 ընտանիք

7. Բազմազավակ – 14 ընտանիք

Կատարվել են 154 քաղաքացիների ընդունելություններ, քննության է առնվել նրանց առաջարկությունները, քննարկվել են քաղաքացիների կողմից ներկայացրած դիմումները և ձեռնարկվել համապատասխան միջոցներ : Բնակչությանը տրամադրվել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և 160 տեղեկանք:
2018թվականի դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի ընտրությունների անցկացման համար սահմանվել է տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը, կահավորվել է քվեարկության սենյակը՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան:

2.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ստեղծվել են բավարար պայմաններ բնակչությանը իրազեկելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին, մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը: Ծրագրերը ներկայացվել է հանրային լսումների և քննարկումների, հանրությունը
իրազեկվել է անցկացվող միջոցառումների մասին:

3. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է՝

Կազմվել է 2019 թվականի բյուջեի նախագիծը և ներկայացվել ավագանու հաստատմանը: Տեղական հարկերի, տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացվել է ավագանու հաստատմանը:
Հաստատվել է 2017թ-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Կազմակերպվել է հողի՝ հարկի , գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների գանձման աշխատանքները : Հարկերը չվճարող անձանց հետ տարվում է բացատրական աշխատանքներ:
2018թ-ի բյուջեն կատարվել է 96.1 % - ով:

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Կազմակերպվել է հանրային միջոցառում՝ նվիրված համայնքի բնակիչ ծանրամարտիկ Սիմոն Մարտիրոսյանի աշխարհի չեմպիոնի տիտղոսի նվաճմանը: Գյուղի սկզբնամասում տեղակայված խաչ-հուշարձան կոթողի բացման ժամանակ նունպես կազմակերպվել է հանրային բացօթյա միջոցառում: Բնակչության կողմից հասարակական կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել :

Ոստիկանության կողմից համայնքում և համայնքի բնակիչների կողմից իրականացված իրավախախտումների վերաբերյալ տվյալներ համայնքի ղեկավարին չի տրամադրվել :

5. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Վարել եմ համայնքի զինապարտների գրանցամատյանը:
Կազմակերպվել է 2018թ-ի ամառային և ձմեռային զորակոչի ընթացքը : Երիտասարդների հետ տեղի են ունեցել հանդիպումներ, որոնց ընթացքում նրանց հետ տարվել է ռազմա-հայրենասիրական դաստիարակչական աշխատանքներ : Զորակոչային տարիքի երիտասարդները ժամանակին են ներկայացել տարածքային զինկոմիսարիատ : Նրանց անձնական գործերը կազմվել և ժամանակին ներկայացվել է զինկոմիսարիատ :

- Ոմանց տրամադրվել են փաստաթղթեր ներկայացնելու ՀՀ Պաշտպանության նախարարություն՝ իրենց բնակարանային խնդիրները լուծելու համար:

Մայիսի 9-ին մեծ հանդիսավորությամբ Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հուշարձանի տարածքում կազմակերպվել է միջոցառում , որտեղ համայնքի բնակիչներից շատ-շատերը իրենց երախտիքի խոսքերն արտահայտեցին Շուշիի ազատագրմանը մասնակցած Հայկաշենցի ազատամարտիկների, Արցախյան պատերազմում զոհված Գագիկ Կիրակոսյանի և Մեծ հայրենականում զոհվածների կատարած սխրագործությունների մասին: Բարեկարգվել և կառուցապատվել է հուշարձանի հարակից այգին:

6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Կազմվել է համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը: Կան քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ և հանձնաժողովներ:

Արտակարգ իրավիճակների Արմավիրի մարզային փրկարար ծառայությանը տրամադրվել է տեղեկատվություն համայնքի հասարակական շինությունների, բնակելի առանձնատների, նրանց սեյսմակայունության, նկուղային հարկերի և նրանց տարողունակության վերաբերյալ:

Ներկայացվել է համայնքի անձնագիրը:

7. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Համայնքի մանկապարտեզի նոր շենքի շինարարությունը ընթացքի մեջ է: 2018 թվականին բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտ է ներկայացվել մարզպետարան՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա ստանալու նպատակով, որի արդյունքում պետական բյուջեից տրամադրվել է 3344.4 հազար ՀՀ դրամ մանկապարտեզի կահույքի ձեռքբերման համար:

Այդ նպատակով համայնքի բյուջեից հատկացվել է 5600.0 հազար ՀՀ դրամ: Աշխատանքները ընթանում են գրաֆիկով:

Արգելվել է ապօրինի շինարարությունը : Կատարվել են փողոցների կառուցապատման և բարեկարգման աշխատանքներ: Պայմանագրային հիմունքներով կանոնավոր կերպով կատարվում է աղբահանություն՝ շաբաթը մեկ անգամ պարբերականությամբ: Մեծ ուշադրություն է դարձվել համայնքի սանիտարահիգենիկ պայմանների վրա :

8. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Իրականացվում է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Ապահովված է համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանումը:

Կատարել ենք համայնքի վարչական տարածքի հողերի ընթացիկ հաշվառումը և կազմել հողային հաշվեկշիռը՝ այն է

Համայնքի վարչական տարածքը - 1036.14 հա

որից՝

1. Վարելահողեր – 489.54 հա
2. Տնամերձ հողեր – 108.23 հա

3.Պետական սեփականության հողեր 55.21 հա
4. Անուրդային կարգով օտարված հողեր – 143.26 հա
5.Համայնքային սեփականության հողեր – 147.51 հա

Համայնքում ապօրինի հողօգտագործողներ չկան : Վարելահողերի փակ դրենաժային համակարգի խցանման պատճառով հողամասերի բարելավման աշխատանքները չեն իրականացվում, տեղի է ունենում հողերի երկրորդային աղակալում , ընկել է հողերի բերրիությունը: Համայնքի վարչական տարածքում գործում են 2 հատ ջրհան կայաններ և վարելահողերի շուրջ 60%-ը ապահովված է ոռոգման ջրով:
Համագործակցում ենք Արմավիրի ԳԱՄԿ-ի հետ և նրանց տրամադրած բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարին վերաբերվող տեղեկատվությունը տրամադրվել է հողօգտագործողներին:

9. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՃԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Առևտրի օբյեկտներին տրվել է ոգելից խմիչքների, ծխախոտի և հեղուկացված գազի վաճառքի թույլտվություն և սահմանվել է յուրաքանչյուր եռամսյակի համար տասը հազար դրամ տեղական տուրք և հաստատվել է ավագանու կողմից : Տեղական տուրքերը և վճարները գանձվել է 100 %-ով :

10. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Հաճախակի կազմակերպվում են համայնքի փողոցների բարեկարգման աշխատանքներ , քանդված հատվածները , փոսերը լցվում են հողով և ավազով , կատարել ենք փողոցների գիշերային լուսավորության աշխատանքներ: Ապահովվում է ներհամայնքային ճանապարհներով տրանսպորտի երթևեկությունը:

11. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Աջակցում ենք հանրակրթական դպրոցի գործունեությանը :
«Վերջին զանգ » միջոցառման ժամանակ դպրոցի շրջանավարտներին տրվել է անձնական նվերներ և շնորհավորանքներ: Առաջին դասարան հաճախող 9 երեխաներին տրամադրվել է դպրոցական պայուսակներ և գրենական

պիտույքներ: Դպրոցում սովորում են 101 աշակերտներ , ապահովված է բարձրակարգ մասնագետներով: Այժմ դպրոցը մասնակի վերանորոգման ընթացքում է և այնտեղ ընթացող աշխատանքները համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության և հսկողության տակ են :

Դպրոցում գործում են գեղարվեստական ինքնագործ խմբակներ, որոնց գործունեությանը աջակցում է համայնքի ղեկավարը և այլ բարերարներ : Գործում է գրադարանը , որտեղ կա շուրջ 7000 կտոր բազմաբովանդակ գրականություն և որը պարբերաբար համալրվում է:

Մեծ աշխատանքներ են տարվում երիտասարդների դերի բարձրացման ուղղությամբ :

12. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Աջակցում ենք համայնքի բուժկետին , սանիտարահիգենիկ , հակահամաճարակային միջոցառումների կատարման գործընթացին , որոնք ընթանում են պլանավորված ժամանակահատվածում և անթերի կերպով :

Համայնքի հանրակրթական դպրոցում կա անհրաժեշտ պարագաներով հագեցած սպորտդահլիճ , որտեղ ցանկացողները զբաղվում են սպորտով :

13. ՍՈՑԻԱԼԱԿՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ՝

Շուրջ 10 սոցիալապես անապահով ընտանիքների տրամադրվել է դրամական օգնություն՝ սոցիալական աջակցության տեսքով:

17 ընտանիքներ ներգրավվել են « Ընտանեկան նպաստ » ծրագրում : Աջակցում ենք երիտասարդ մասնագետների աշխատանքի ընդունմանը:

14. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝

Գարնան ընթացքում ներհամայնքային ոռոգման ցանցի ջրատարները մաքրվել են բուսական մնացորդներից և տիղմից , կատարվել են վերանորոգման աշխատանքներ : Կազմակերպվել են հանդիպումներ բնակչության հետ , որի ընթացքում արծարծվել են ցանքի հետ կապված հարցեր , մշակաբույսերի տարածված հիվանդությունների և ժամանակակից բուծման նոր մեթոդների լուսաբանման հետ կապված հարցերը : Շատերին տրվել են խորհուրդներ և ցուցումներ :

Հարևան Գայ համայնքի վարչական տարածքում գործող գյուղմթերքների մեծածախս առևտրի շուկան նպաստում է գյուղմթերքների իրացմանը:

Կատարվել են գյուղ. կենդանիների հաշվառում. համայնքում առկա են՝

խոշոր եղջ. կենդանիներ -521 գլ.

որից՝

կովեր – 205 գլ.

խոզեր – 80 գլ.

ոչխարներ – 601 գլ.

թռչուններ - 1084 գլ.

Պարբերաբար հսկվում է համայնքի անասնաբույժի աշխատանքը, որպեսզի գյուղ. կենդանիների բուժ. պրոֆիլատիկ և հակահամաճարակային միջոցառումները կատարվեն ժամանակին և անթերի կերպով:

Համայնքում առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ:

Գյուղը գազաֆիկացված չէ: Մշակույթի տունը վթարային վիճակում է, որն ունի կապիտալ վերանորոգման կարիք: Չկա գյուղապետարանի շենք և փոստատուն: Համայնքի փողոցները ունեն վերանորոգման և ասվալտապատման կարիք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ